

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

### Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԸ

Պարբերաբար բանի մը թերթերու մէջ կը յեղյեղուի թէ՛ Հ. Բ. Ը. Միութիւնը «կարեւոր» եւ նոյն իսկ «ահագին» գումարներ կը արամադրէ Կուսակցութեան մը:

Թէեւ Միութեան հաշիւները բաց զիրրի մը յստակութեամբ ամէն առթիւ եւ մասնաւորաբար իր աւարեկան տեղեկագիրներով (տես զլիւսաւորաբար կցեալ-հաշուեցոյց թիւ 7) ժողովուրդին աչքերուն առջեւ կը դրուին, եւ ամէն որ կը տեսնէ մանրամասնօրէն թէ Միութեան անտուկէն ի՞նչ վճարումներ եւ ծախքեր եղած են այս կամ այն նպատակին համար, բոլոր այդ անհրաժեշտ իրողութիւնը եւ պաշտօնական մեկին հերքումները օգուտ մը չեն բրած, բանի որ նոյն յանկերգը կը կրկնուի դարձեալ, յամառօրէն, միտքերը պղտորելու համար:

Անգամ մը եւս ցոյց տալու համար թէ այդ վերագրումները բացարձակապէս անհիմն են եւ ոեւէ փաստի վրայ չեն յենուր, իրրեւ Միութեան Կեդրոնի պատասխանատու զանձապահ, պարտականութիւն սեպեցի ներկայ յայտարարութեանս վճարական հանգամանք մը ապա, զիմեյով մեր Միութեան Ընդհ. Հաշուերնիչ Տ. Ռուբին Թաղէտեանի պաշտօնական վկայութեան, որ իր բացարձակութեամբ միանգամ ընդ միշտ կը զոցէ զրպարտութեան ամէն դուռ:

Ահա՛ նամակը զոր այս առթիւ Տ. Ռ. Թաղէտեանի ուղղեցի 9 Յունվարին. —

«Կը խնդրեմ որ, ձեր պատասխանատու պաշտօնին բերմամբ, համբի անվերապահ կերպով պատասխանել յետագայ երկու հարցումներուն, 1929-էն ի վեր ձեր կողմէ օրը օրին քննուած եւ վաւերացրուած հաշիւներուն հիման վրայ:

«Ա. — Հաստատած կամ նոյն իսկ կասկածա՞ծ էր Հ. Բ. Ը. Միութեան ընդհանուր հաշիւներուն մէջ գոյութիւնը ո եւ է ծախքի, վճարումի կամ զազանի վարկի մը, ազգային ո եւ է Կուսակցութեան եւ քաղաքական ո եւ է նպատակի համար, ըլլայ յայնապէս, ըլլա՛յ քողածածուկ:

«Բ. — Լրագիրներու եւ հանդէսներու րաժանորագրութեանց եւ ծանուցումներու համար 1929-էն ի վեր տարեկան ի՞նչ գումար նշանակուած է Միութեան քրտականափ կամ այլ հաշիւներուն մէջ, եւ արդիօր տարեկան հաշուեկշիւներուն մէջ ցոյց տրուած թուանշաններէն զատ ո եւ է ձեռի կամ անուռի տակ ուրիշ գումարներ ալ յատկացուա՞ծ են այդ նպատակով:

«Այս հարցումը ձեզի կ'ուղղեմ իրրեւ Կեդր. Վարչութեան զանձապահ, միանգամ ընդ միշտ փաստացիօրէն հերքելու համար այն յանկերգուած զրպարտութիւնը թէ Հ. Բ. Ը. Միութիւնը Կուսակցութեան մը կ'օգնէ կ'արեւոր գումարներով, ենթադրութիւն որ յառաջ կու գայ միայն այն իրողութենէն թէ այդ Կուսակցութիւնը Միութեան հիմնարկութենէն ի վեր անոր զօրմուկութիւնը զնահատած է եւ իր շարքերուն մէջէն շատեր անդամակցած եւ ծառայած են Միութեան անշահախնդրօրէն:

Տ. Ռ. Թաղէտեան յետագայ պատասխանը տուած է, զոր նոյնութեամբ կ'արեւագրեմ. —

«Ի պատասխան նամակիս միւս երեսին ինձ ուղղուած հարցերին, պատիւ ունիմ հաղորդելու ձեզ թէ 1929-ից ի վեր, Հ. Բ. Ը. Միութեան քննուած հաշիւների մէջ եւ չեմ հանդիպել որ եւ է ծախքի, վճարումի կամ փոխանցման ի նպատակ ո եւ է Կուսակցական կամ քաղաքական կազմակերպութեան:

«Ձանազան լրագիրների եւ պարբերականների համար ծախսուած է, համաձայն հաշուեկրքերի եւ փաստաթղթերի, 1929-ին՝ Ա. Ռ. 78. 6. 1, 1930-ին՝ Ա. Ռ. 60. 5. 9, 1931-ին՝ Ա. Ռ. 102. 13. 0, 1932-ին՝ Ա. Ռ. 90. 20. 10, 1933-ին՝ Ա. Ռ. 106. 15. 5, իսկ 1934-ին ցայսօր արժանագրուած է Ա. Ռ. 130. 1. 4:

«Բոլոր-յիշուած գումարները, ի բաց առեալ վերջինը, զանուում են ապագրեալ տարեկան հաշուեկրշիւների մէջ:

«Աւելորդ չեմ համարում յիշեցնել նաեւ որ Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնում անդի ունեցող ծախքերը կամ վճարումները կատարուած են կանոնաւոր ձեւակերպութեամբ, հրամանագրիներով, որոնց վրայ պատշաճ մանրամասնութեամբ արժանագրուած են ելրի առարկան, ո՞ւմ յանձնարարութեամբ, ո՞ր հաշուին, ի՞նչ հիման վրայ, ի՞նչ բանի զիմաց, ստացողի անունը, գումարը, վճարումի ձեւը եւ ապացոյցը:

«Այսպիսի հրամանագրիները կրում են ընդհ. անօրէնի հաշուապետի եւ արկղակալի (կարեւոր գումարների համար զանձապահի եւս) ստորագրութիւնները:

Խորին յարգանք

Հաշուերնիչ

ՌՈՒԲԷՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ

(Նախկին անօրէն Պաթումի փուլի

Թիֆլիսի Վաճառականական Դրամատան)

ձմարտութեան ծառայող բոլոր հայ թերթերէն կը խնդրեմ հրատարակել սոյն Ձեկոյցը:

Բարիկ, 21 Յունվար 1935

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

Գանձապահ

ԼԵՌՈՆ ԿԻՄԻՐՈՇԿԷՐՏԱՆ